ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» մայիսի 2025թ. ք. Երևան № 17-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 29-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի կրծքանշան և մեդալներ հիմնելու, դրանց նկարագրությունը, վկայականի ձևը և շնորհման կարգը սահմանելու մասին» N 29-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի մեդալներ՝

ա. «Անբասիր ծառայության համար» մեդալ.

բ. «Գերազանց ծառայության համար» մեդալ.

գ. «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալ.

դ. «Լավագույն ծառայող» մեդալ.

ե. «Համագործակցության համար» մեդալ:»:

2) Հրամանի 2-րդ կետում լրացնել 4.1-ին ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.1) «Լավագույն ծառայող» մեդալի և վկայականի ձևն ու նկարագիրը՝ համաձայն հավելված N 4.1-ի:»:

3) Հրամանի հավելված N 6-ի՝

ա. 5-րդ կետում «որոնք ունեն ՀՀ իրավապահ մամիններում» բառերը փոխարինել «որոնք դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնում կամ ՀՀ իրավապահ մյուս մարմիններում ունեն» բառերով, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ իրար փոխլրացնող)» բառերը.

բ. 6-րդ կետում «որոնք» բառից հետո լրացնել «դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնում կամ ՀՀ իրավապահ մյուս մարմիններում» բառերով, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ իրար փոխլրացնող)» բառերը.

գ. 7-րդ կետում «որոնք» բառից հետո լրացնել «դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնում կամ ՀՀ իրավապահ մյուս մարմիններում» բառերով, իսկ «ստաժ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ իրար փոխլրացնող)» բառերը.

դ. 8-րդ կետում «որոնք» բառից հետո լրացնել «դատավորի, դատախազի, քննիչի պաշտոնում կամ ՀՀ իրավապահ մյուս մարմիններում» բառերով, «ստաժ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ իրար փոխլրացնող)» բառերը, իսկ «կառուցվածքների» բառը փոխարինել «կառուցվածքային» բառով.

ե. 8-րդ կետից հետո լրացնել 8.1.-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1. «Լավագույն ծառայող» մեդալով պարգևատրվում են Կոմիտեի այն ծառայողները, որոնք ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև հանրային հնչեղություն ունեցող հանցագործությունների բացահայտման և քննության գործում գրանցել են բարձր ցուցանիշներ, ունեցել են բարձր կարգապահություն, իրականացրել են բարեխիղճ և արդյունավետ ծառայություն, ցուցաբերել են նախաձեռնողականության բարձր մակարդակ:»:

2. Սույն հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարին, Կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրը:

Արդարադատության առաջին դասի խորհրդական՝

30.05.2025

X

Ա. Ա. Նահապետյան

Подписано: NAHAPETYAN ARTUR

«Հավելված N 4.1
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
2025 թվականի մայիսի 30 -ի N17-Լ հրամանի

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՂ»

Մեդալի և վկայականի ձևն ու նկարագիրը

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՂ» մեդալը պատրաստված է 2 մասից՝ չժանգոտվող ցինկապատ պողպատե հնգանիստ կախիչից և դրան արծաթագույն կապօղակով ամրացված սկավառակից:

Մեդալի կախիչը ասեղային ամրակով ամրանում է պարգևատրվողի հագուստին: Կախիչի չափսերն են՝ 45 մմ լայնություն, 50 մմ երկարություն: Կախիչը պաստառված է ժապավենով, որը բաժանված է 11,5 մմ լայնությամբ հավասարաչափ կապույտ և մոխրագույն շերտագծերի, որոնց կենտրոնով վերից վար անցնում է 1 մմ լայնությամբ սպիտակ շերտագիծ: Սկավառակը պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է: Սկավառակի եզրագծին զուգահեռ, աջ և ձախ կողմերում առկա են ոսկեգույն դափնու տերևներ, իսկ ներքևի մասում կորաձև տեղակայված է 3,2 մմ լայնությամբ, կապույտ, էմալապատ, ոսկեգույն եզրագծերով ժապավեն, որի մեջ մեծատառերով, ուռուցիկ և կորաձև գրված են՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԾԱՌԱՅՈՂ» բառերը, որոնց բարձրությունը 1,6 մմ է:

Սկավառակի կենտրոնում տեղակայված է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ռելիեֆային 27Х13 մմ չափսերով խորհրդանիշը: Սկավառակի հիմնական գույնն արծաթագույնն է:

Մեդալի դարձերեսին առկա է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» հորիզոնական եռատող ռելիեֆային ուռուցիկ գրառումը, որի տառերի բարձրությունը 2,2 մմ է, իսկ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը:

Մեդալը պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ (160Х110Х32մմ):

(նմուշ -օրինակ)

Վկայականի կազմը (չափերը՝ 9x12սմ) պատրաստվում է բարձրորակ կազմարարական թաղանթանյութից: Վկայականի դարձերեսին՝ վերևում, դաջված է Հայաստանի Հանրապետության պետական զինանշանը, իսկ ներքևում՝ ոսկեգույն տառատեսակով «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ**» գրառումը:

Վկայականի ներդիրի (չափերը՝ 8,5x12սմ) համար օգտագործվում է ջրանիշերով զարդանախշված բարձրորակ թուղթ: Վկայականի ներդիրի ձախ կողմում մեդալի գունավոր արտատիպն է, ներքևի մասում գրված է «**ՎԿԱՅԱԿԱՆ**», որի ներքևում վկայականի հերթական համարն է: Աջ կողմում՝ վերևում գրվում է «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ**» բառերը, որից ներքև՝ պարգևատրման ամսաթիվը և հրամանի համարը: Դրանից ներքև՝ համապատասխան տողերում, նշվում է պարգևատրվող աշխատակցի կոչումը (դասային աստիճանը), անունը, ազգանունը, հայրանունը: Տողերից ներքև գրվում է «**պարգևատրվել է**», որից հետո մեդալի անվանումը: Վկայականի ներքևում գրվում է Կոմիտեի նախագահ, նշվում է վերջինիս կոչումը (դասային աստիճանը), իսկ աջ կողմում՝ Կոմիտեի նախագահի անվան, հայրանվան առաջին տառերը և ազգանունը:

Վկայականը հաստատվում է Կոմիտեի նախագահի կնիքով և ստորագրությամբ:»: